

Այս օրինակն սեպհական էր ժամանակաւ անգղիական Lord Crawford and Balcarras գերդաստանի ընտանեկան մատենադարանին, եւ կը կրէր Հայ գրչագրաց կարգին մէջ թ. 3: «Մագաղաթեայ, բոլորգիր, 183 թղթով», Չեռագիրս հանգամանքով նման է Սոյ օրինակին՝ նկարազարդ ոսկեխառն գոյներով եւ կեչառուեան ոտանաւորներով: Գրոցս երրորդ թերթէն 8 թուղթ եւ իններորդէն 2 թուղթ պակաս է. ունի 119 նկար եւ աւելի քան 200 ոտանաւոր. այսպէս կը նկարագրէր Ս. Վ. Պարոնեան յամի 1892 առ Հ. Տաշեան թղթին մէջ¹: Այժմ՝ Կրաֆորդեան Մատենադարանն ստացած է հայերէն գրչագիրներով հանդերձ The John Rylands գրաւաճառանոցն ի Մանչեստր, որուն գրաւաճառն A. Guppy խնդրանօքս ի ձեռն Պրոֆ. Կոնիբերի գրաւ տրամադրութեանս ներքեւ կարեւոր յիշատակարաններու լուսանկարը: Չեռագիրը ծագած է ինքնին Չաքարիա եպիսկոպոսի ձեռքէն, եւ զուր է այս մասին Կ. Բասմաջեանի կասկածն² թէ «այլ ձեռաց արդիւնք է, եւ հետեւաբար կրաւֆորդեան օրինակը Չաքարիայի իսկական ձեռագիրը չէ», (Տաշեան՝ անդ, 182—3):

Ստորեւ պիտի տանք Չաքարիայի Կաֆա-

¹ Մանրամասնութիւնք Չեռ. մասին տես անդ, էջ 156—60:

² Հիմն, որուն վրայ յեցած է Բասմաջեան՝ է Չեռագրին «Սուլիման աստիք» ձեւն, որ, ինչպէս կանխեցինք ըսել, նպատակաւ անդի ունեցած է, եւ ոչ տգիտութեամբ: